

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՍՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
№ 23/08

Քաղ. Երևան

29 հուլիսի 2008թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ.Վարդանյան, Գ.Յ.Ադամյան և Ա.Վ.Բաբայան, քարտուղար՝ Լ.Ե.Ասցատրյան, իր 2008թ. հուլիսի 29-ի նիստում (արձանագրություն №63/7) քննարկեց Օբջեստվո ս օգրանիչենոյ օտվետստվեննոստյու «Սովմեստնոյե պրեդպրիյատիյե Նիդան-Էկոնֆրոուկտ» ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Է.Նահապետյանի 2008թ. հունիսի 10-ին ներկայացված բողոքը «Моя Семья» (ՀՀ վկ.դ.12096) ապրանքային նշանի գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Բողոքարկողի փաստարկները հետևյալն են:

Բողոքարկողը հայտնում է, որ «Օբջեստվո ս օգրանիչենոյ օտվետստվեննոստյու «Սովմեստնոյե պրեդպրիյատիյե Նիդան-Էկոնֆրոուկտ» ընկերությունը 2007թ. հունիսի 22-ին ՀՀ Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն (այսուհետ՝ գործակալություն) է ներկայացրել երկու հայտ «My Family» (դ. 20070695) և «Моя Семья» ապրանքային նշանները ԱԾՄԴ 32-րդ և 33-րդ դասերում գրանցելու համար: Փորձաքննությունը 22.01.2008թ. որոշում է կայացրել դ. 20070695 հայտով «My Family» ապրանքային նշանը գրանցելու մասին (ՀՀ վկ.դ.12778), իսկ դ. 20070696 հայտով մերժել է գրանցումը 32-րդ դասում՝ հիմք ընդունելով «Նատալի Էքսպորտ» ՍՊԸ-ի անունով ԱԾՄԴ 32-րդ դասի ապրանքների համար գրանցված՝ «Моя Семья» (ՀՀ վկ.դ. 12096) ավելի վաղ առաջնությամբ (25.10.2006թ.) ապրանքային նշանի առկայությունը:

Սակայն բողոքարկողը հարկ է համարում նշել, որ «Նատալի Էքսպորտ» ՍՊԸ ընկերության կողմից 2006թ. հոկտեմբերի 25-ին «Моя Семья» ապրանքային նշանի հայտ ներկայացնելիս՝ 2004թ. փետրվարի 4-ից Հայաստանի Հանրապետությունում արդեն իսկ տարածում էր ստացել «Օբջեստվո ս օգրանիչենոյ օտվետստվեննոստյու «Սովմեստնոյե պրեդպրիյատիյե Նիդան-Էկոնֆրոուկտ» ընկերության՝ «My Family» (անգլերենից թարգմանաբար նշանակում է «Իմ ընտանիքը», «Моя Семья») IR 824469 միջազգային գրանցումը, որի նախկին սեփականատերն էր հանդիսանում «NOVO-PAN Kereskedelmi es Szolgaltato» Kft. հունգարական ընկերությունը: Բողոքարկողի կարծիքով ակնհայտ է, որ Հայաստանում դ. 12096 «Моя Семья» ապրանքային նշանը գրանցվել է «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք)

12-րդ հոդվածի 1-ին մասի բ) ենթակետով սահմանված պահանջների խախտմամբ, այն է՝ այդ նշանը շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, նույն կամ նույնատիպ ապրանքների համար առանց գրանցման պահպանվող ավելի վաղ առաջնությամբ “My Family” IR 824469 ապրանքային նշանին: Նշանների շփոթելու աստիճանի նմանությունը հիմնավորելու համար բողոքարկողը մեջբերումներ է անում «Ապրանքային և սպասարկման նշանների գրանցման հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման» Կարգի (այսուհետ՝ նաև կարգ) 97-100-րդ կետերից, հատկապես կարևորելով 100-րդ կետի 1-ին ենթակետը, համաձայն որի «իմաստային նմանությունը որոշվում է նշանների մեջ դրված նման հասկացության, գաղափարի, մասնավորապես, տարբեր լեզուներով նշանների համընկնող իմաստի»: «МОРЯ Семья» արտահատությունը միանշանակ իրենից ներկայացնում է անգլերեն “My Family”-ի անգլերեն բառակապակցության ռուսերեն թարգմանություն և այս դեպքում, բողոքարկողի համոզմամբ, այլ լեզվից թարգմանությունը, համաձայն օրենսդրությանը, չի կարող հանդիսանալ պաշտպանության առարկա:

Բողոքարկողը հայտնում է նաև, որ «Օրջեստվո Ս Օգրանիչենոյ Օտվետստվեննոստյու «Սովմեստնոյե արեդպրիյատիյե Նիդան-Էկոֆրուկտ» ընկերության հանձնարարությամբ նա 22.06.2007թ. դիմում է ներկայացրել գործակալության ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների բաժին՝ “My Family”/«МОРЯ Семья» ապրանքային նշանը ԱԾՄԴ 32-րդ դասում որոնում անցկացնելու խնդրանքով: Որոնման արդյունքում 06.07.2007թ. դրությամբ կազմված հաշվետվության մեջ (կցված է բողոքին) բաժինը նշել էր միայն դ 20070695 և դ 20070696 տեղական հայտերը, ինչպես նաև դր IR 700234, IR 700235 և IR 824469 միջազգային գրանցումները, այսինքն «МОРЯ Семья»-ին հակադրվել է նաև “My Family” IR 824469 միջազգային գրանցումը, իսկ «МОРЯ Семья» ապրանքային նշանի դ 12096 գրանցումը փորձաքննությունը տարօրինակ ձևով չէր հայտնաբերել: Սակայն դ 20070696 հայտով փորձաքննության որոշման մեջ որպես մերժման հիմք ի հայտ եկավ դ 12096 «МОРЯ Семья» գրանցումը:

Բողոքարկողը նշում է, որ, փաստորեն, փորձաքննության կրկնակի սխալի հետևանքով.

1) դ 12096 «МОРЯ Семья» ապրանքային նշանի փորձաքննությունն անցկացնելիս՝ հաշվի չի առնվել և չի հակադրվել IR 824469 “My Family” գրանցումը, 2) որոնման հաշվետվության մեջ դ 12096 գրանցումը չի նշվել, սակայն հայտատուի «МОРЯ Семья» ապրանքային նշանի դ 20070696 հայտով՝ որպես 32-րդ դասում գրանցման մերժման հիմք, ի հայտ եկավ դ 12096 «МОРЯ Семья» գրանցումը: Ստացվում է, որ «ՆԻԴԱՆ-ԷԿՈՖՐՈՒԿՏ» ընկերությանը այսօրվա դրությամբ պատկանում են IR 824469 “My Family” և դ 12778 “My Family” նշանները, իսկ այդ նշանների «МОРЯ Семья» ռուսերեն թարգմանությունը, որի անվանմամբ «ՆԻԴԱՆ-ԷԿՈՖՐՈՒԿՏ»-ը արդեն քանի տարի է ներմուծում և վաճառում է իր լայն սպառում գտած արտադրանքը Հայաստանում, իրեն չի պատկանում, այլ պատկանում է լրիվ ուրիշ ընկերությանը, որը առնչություն չունի այդ ապրանքի արտադրման հետ:

Այսպիսով, հիմք ընդունելով վերը նշված հանգամանքները և առաջնորդվելով օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետով, բողոքարկողը՝ «Օրջեստվո Ս Օգրանիչենոյ Օտվետստվեննոստյու «Սովմեստնոյե արեդպրիյատիյե Նիդան-Էկոֆրուկտ» ընկերության

հանձնարարությամբ, խնդրել է «МОРЯ Семья» (ՀՀ վկ.դ.12096) ապրանքային նշանի գրանցումը անվավեր ճանաչել Հայաստանում 32-րդ դասի ապրանքների համար:

«МОРЯ Семья» (ՀՀ վկ.դ.12096) ապրանքային նշանի սեփականատեր «Նատալի Էքսպորտ» ՍՊԸ-ն, սահմանված կարգով ծանուցված լինելով բողոքի նյութերին, 2008թ. հունիսի 18-ին իր ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Ա.Գալոյանի միջոցով բողոքարկման խորհուրդ առարկություն է ներկայացրել՝ 2008թ. հունիսի 10-ին գործակալության բողոքարկման խորհուրդ «Օբջէստվո Ս Օգրանիչենոյ Օտվետստվեննոստյու «Սովմեստնոյե պրեդպրիյատիյե Նիդան-Էկոֆրուկտ» ընկերության կողմից ներկայացված բողոքի դեմ:

«Նատալի Էքսպորտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնում է, որ ընկերությունը համաձայն չէ բողոքում բերված փաստարկների հետ, քանի որ այդ ընկերությունը, սկսած 2006թ., ոչ միայն հանդիսանում է օրենքի բոլոր պահանջներին համապատասխան կատարված «МОРЯ Семья» ապրանքային նշանի (ՀՀ վկ.Ո12096) գրանցման սեփականատերը, այլ նաև 2006 թ. մինչև այսօր բարեխղճորեն օգտագործում է այն: Ընկերությունը զբաղվել և զբաղվում է «МОРЯ Семья» ապրանքային նշանով մակնիշված ապրանքների ներմուծմամբ, վաճառքով, տարածումով, գովազդով, ինչպես նաև կատարում է խոշոր չափի ներդրումներ ու իրականացնում տարբեր ակցիաներ, ինչի արդյունքում այսօրվա դրությամբ «Նատալի Էքսպորտ» ՍՊԸ-ի անունով գրանցված «МОРЯ Семья» ապրանքանիշով ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածքում մեծ ճանաչում են վայելում և բարի համբավ ունեն սպառողի մոտ:

Ի հաստատումն դրան «Նատալի Էքսպորտ» ՍՊԸ-ն ներկայացրել է իր և «Նիդան+» ՍՊԸ-ի (որն Ուկրաինայում զբաղվում է հյուրերի և նեկտարների արտադրությամբ) միջև կնքված պայմանագրերի (1 մլն դոլար արժողությամբ յուրաքանչյուր տարի) պատճենները, համաձայն որոնց «Նիդան+» ՍՊԸ-ն պարտավորվում է “Նատալի Էքսպորտ” ՍՊԸ-ի պատվերով Հայաստանի Հանրապետության շուկայի համար հյուրեր և նեկտարներ արտադրել «МОРЯ Семья» ապրանքային նշանով: 2006 - 2007թթ. «МОРЯ Семья» ապրանքային նշանով մակնիշված արտադրանքը Հայաստանի Հանրապետություն էր ներմուծվում “Նատալի Էքսպորտ” ՍՊԸ-ի կողմից: Այնուհետև, 2007թ. մինչև այսօր «Նատալի Էքսպորտ» ՍՊԸ-ի և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի համաձայն (կցվում է), «МОРЯ Семья» ապրանքային նշանով արտադրանքը Հայաստան է ներմուծվում բացառապես «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից:

«Նատալի Էքսպորտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը կարևորում է այն փաստը, որ «МОРЯ Семья» ապրանքային նշանը հայտնի է դարձել «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից անցկացված գովազդային կամպանիայի շնորհիվ՝ սկսած 2006 թվականից: Այդ ապրանքանիշի գովազդը եթեր է հեռարձակվում հետևյալ առաջատար հեռուստատվիթներով՝ Յ1, h2, Նոր ալիք, OPT, Արմենիա, Հայ TV, ԱԼՍ, ՇԱՆԹ, Կենտրոն, TV 5, Արմեն Ակոր, ինչպես նաև ընկերությունը հանդիսանում է մի քանի հեռուստատեսային ծրագրերի և սերիալների հովանավոր:

Միաժամանակ «Նատալի Էքսպորտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հարկ է համարում նշել, որ «Օբջէստվո Ս Օգրանիչենոյ Օտվետստվեննոստյու «Սովմեստնոյե պրեդպրիյատիյե Նիդան-Էկոֆրուկտ» ընկերությանը պատկանող «My Family» ապրանքանիշով հյուրերը երբեք չեն

ներմուծվել, վաճառվել և գովազդվել Հայաստանի Հանրապետության շուկայում և այդ ապրանքային նշանը հայ սպառողի համար հանդիսանում է անհայտ ապրանքանիշ, հետևապես, Հայաստանի սպառողը երբեք չի կարող շփոթել «Նատալի Էքսպորտ» ՍՊԸ-ի գործունեության շնորհիվ արդեն հայտնի դարձած «МОЯ Семья» ապրանքային նշանով ապրանքները անհայտ «My Family» ապրանքանիշով հյուրերի հետ:

Իր կարծիքով, «Օբջէստվո Ս Օգրանիչենոյ Օտվետստվեննոստյու «Սովմեստնոյե պրեդպրիյատիյե Նիդան-Էկոֆրուկտ» ընկերությունը՝ պատճառաբանելով, թե «My Family» և «МОЯ Семья» նշանները սպառողին շփոթության մեջ կարող են գցել, և դա այն դեպքում, երբ, նախ և առաջ, ապրանքային նշանները բացարձակապես նման չեն, և, երբ իրենց ապրանքային նշանն ընդհանրապես չի օգտագործվել և չի օգտագործվում Հայաստանի Հանրապետության տարածքում, նպատակ ունի խոչընդոտելու «Նատալի Էքսպորտ» ՍՊԸ-ի աշխատանքներին ու գործունեությանը և իրականությանը չհամապատասխանող պատճառաբանությունների հիման վրա գավթելու 2006 թվականից վերջինիս անունով գրանցված և նրա իսկ աշխատանքների, գովազդային քարոզարշավի շնորհիվ Հայաստանի Հանրապետությունում ճանաչում ձեռք բերած «МОЯ Семья» ապրանքային նշանը և օգտագործել այս վերջին տարիների ընթացքում վաստակած «Նատալի Էքսպորտ» ՍՊԸ-ի բարի անունն ու համբավը:

Ելնելով իր բերված փաստարկներից, «Նատալի Էքսպորտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը գտնում է, որ «Օբջէստվո Ս Օգրանիչենոյ Օտվետստվեննոստյու «Սովմեստնոյե պրեդպրիյատիյե Նիդան-Էկոֆրուկտ» ընկերության կողմից ներկայացրած բողոքի պահանջներն ու պատճառաբանություններն անհիմն են, ուստի բողոքը բավարարելու հիմք հանդիսանալ չեն կարող:

Առարկության կից ներկայացվել են՝

1. Ուկրաինական «Նիդան+» ՍՊԸ-ի տնօրենի նամակը առ այն, որ ընկերությունը, որն հանդիսանում է «МОЯ Семья» ապրանքային նշանով մակնշված հյուրերի և նեկտարների արտադրողը, 2006թ. սկսած իր արտադրանքն է ներմուծում նաև Հայաստանի Հանրապետություն: 2006 - 2007թթ. տվյալ արտադրանքը ներմուծվում էր «Նատալի Էքսպորտ» ՍՊԸ-ի հասցեով: 2007թ. փետրվարից առ այսօր «МОЯ Семья» ապրանքային նշանով մակնշված հյուրերն ու նեկտարները Հայաստանի Հանրապետություն են ներմուծվում բացառապես «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի պատվերներով:

2. «Նիդան+» ՍՊԸ-ի հետ 2006 - 2008 թթ.-ին կնքված ներմուծման պայմանագրերի պատճենները:

3. Գովազդային գործակալության տեղեկանքը՝ «МОЯ Семья» ապրանքային նշանի գովազդային հոլովակի հեռարձակված ժամանակացույցով, ինչպես նաև տարբեր հեռուստաընկերությունների և գովազդային գործակալությունների հետ կնքած պայմանագրերը:

Ներկայացված բողոքի քննարկման արդյունքում կոլեգիան պարզել է, որ բողոքում բերված են մի շարք փաստարկներ, որոնք, ըստ բողոքարկողի, հիմնավորում են «МОЯ Семья» (ՀՀ վկ.դ.12096) ապրանքային նշանի գրանցումն ԱԾՄԴ 32-րդ դասի ապրանքների համար անվավեր ճանաչելու իր խնդրանքը:

1. Բողոքարկողը գտնում է, որ «МОЯ Семья» (ՀՀ վկ.դ.12096) ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման է «Սովմեստնոյե պրեդպրիյատիյե ՆԻԴԱՆ-ԷԿՈՖՈՒԲԿՏ» ընկերության անունով գրանցված՝ «My Family» IR 824469 միջազգային գրանցմամբ, ինչպես նաև «My Family» (ՀՀ վկ.դ.12778) ազգային գրանցմամբ ապրանքային նշաններին, քանի որ տարբեր լեզուներով գրված և համընկնող իմաստ ունեցող ապրանքային նշանների առկայությունը, իր կարծիքով, միանշանակ փաստարկ է, որ այդ գրանցումը անվավեր ճանաչվի:

Կոլեգիան, հաշվի առնելով ներկայացված փաստարկները, ինչպես նաև փորձաքննության բաժնի կողմից տրված պարզաբանումները, գտնում է, որ հայ միջին սպարողի կողմից տարբեր լեզուներով գրված «МОЯ Семья» և «My Family» արտահայտությունները չեն ընկալվի որպես նույն իմաստ ունեցող և, հետևապես, մոլորություն չեն առաջացնի 32-րդ դասի ապրանքների նկատմամբ:

2. Բողոքարկողի մեկ այլ փաստարկը վերաբերում է նրան, որ որոնման հաշվետվության մեջ «МОЯ Семья» դ. 12096 գրանցումը չի նշվել, սակայն հետագայում դա ի հայտ է եկել՝ որպես հայտատուի «МОЯ Семья» ապրանքային նշանի դ. 20070696 հայտով ԱՃՄԴ 32-րդ դասում գրանցման մերժման հիմք:

Բողոքարկման խորհուրդը այս փաստարկը չընդունեց, համաձայնվելով ապրանքային նշանների բաժնի պետի պարզաբանման առ այն, որ երբ պատվիրվել և անց էր կացվել «My Family»/«МОЯ Семья» ապրանքային նշաններով որոնում, որն անցկացվել է «Հայաստանի Հանրապետությունում իրավական պահպանություն ստացած և գրանցման ներկայացված ապրանքային և սպասարկման նշանների տվյալների հիմնապաշարում որոնում անցկացնելու կարգի» համաձայն, «Նատալի Էքսպորտ» ՍՊԸ-ի «МОЯ Семья» դ. 20061186 հայտով ապրանքային նշանը մասնակի մերժված է եղել ԱՃՄԴ 32-րդ դասի ապրանքների համար և այդ պատճառով չէր ընդգրկվել որոնման մեջ: Հետագայում, կրկնական փորձաքննության որոշմամբ (05.09.2007թ.), նշանը գրանցվել է հայտարկված բոլոր դասերի համար (դ. 12096 գրանցում) և, բնականաբար, «ի հայտ է եկել» նաև 32-րդ դասում: Բացի այդ, որոնումը անց է կացվել դ. 20070696 հայտը ներկայացնելուց հետո, և դրա արդյունքները, բնականաբար, արդեն չէին կարող ազդել հայտ ներկայացնելու հանգամանքի վրա:

3. Վերջին փաստարկը, որը ներկայացրել է բողոքարկողը, այն է, որ «Սովմեստնոյե պրեդպրիյատիյե ՆԻԴԱՆ-ԷԿՈՖՈՒԲԿՏ» ռուսական ընկերությունը արդեն քանի տարի է, որ ներմուծում և վաճառում է «МОЯ Семья» ապրանքային նշանով մակնշված իր արտադրանքը Հայաստանում, որը լայն սպառում է գտել:

Սակայն այդ պնդումը հաստատող և ոչ մի ապացույց բողոքարկողի կողմից չի ներկայացվել, դեռ ավելին, Հայաստանում «МОЯ Семья» նշանը օգտագործելու համոզիչ ապացույցներ են ներկայացվել «Նատալի Էքսպորտ» ՍՊԸ-ի կողմից, այդ թվում, իր և ուկրաինական «Նիդան+» ՍՊԸ-ի հետ 2006 - 2008 թթ.-ին կնքված ներմուծման և վաճառքի պայմանագրերի, ինչպես նաև Հայաստանում «МОЯ Семья» ապրանքային նշանի լայնածավալ գովազդի փաստը հաստատող տարբեր հեռուստաընկերությունների և գովազդային գործակալությունների հետ կնքած պայմանագրերի պատճենները: Հետևապես, կոլեգիայի կարծիքով, «Սովմեստնոյե պրեդպրիյատիյե

ՆԻԴԱՆ-ԷԿՈՖՈՒԿՏ» ռուսական ընկերության բերված վերջին փաստարկն ևս հիմք չէ «МОЯ Семья» դ12096 գրանցումը անվավեր ճանաչելու համար:

Բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում քննարկելով ներկայացված նյութերը և առարկությունները, ինչպես նաև հաշվի առնելով կոլեգիայի կողմից բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը գտնում է հետևյալը:

Միանշանակ չէ սպառողի տեսակետից «My Family» և «МОЯ Семья» ապրանքային նշանների շփոթելու աստիճան նման լինելը, քանի որ արդեն երկու տարի է, ինչ «Նատալի Էքսպորտ» ՍՊԸ-ն լայնածավալ գործունեություն է իրականացնում Հայաստանի շուկայում՝ ներմուծելով և իրացնելով «МОЯ Семья» ապրանքային նշանով մակնշված հյութերը, և այդ մասին բողոքարկման խորհուրդ ներկայացված ապացույցները հիմք են հանդիսանում եզրակացնելու, որ հայ սպառողը սկսել է ճանաչել «МОЯ Семья» նշանը որպես այդպիսին, այլ ոչ թե որպես «My Family»-ի թարգմանություն: «My Family» IR 824469 միջազգային գրանցման սեփականատիրոջ կողմից նշանի օգտագործումը հաստատող փաստարկներ չներկայացնելը համոզիչ ապացույցն է այն բանի, որ ապրանքային նշանի սեփականատերը՝ ներկայումս «Սոլվեստոյե պրեդպրիյատիյե ՆԻԴԱՆ-ԷԿՈՖՈՒԿՏ» ռուսական ընկերությունը, ընդհանրապես իրեն ոչ մի կերպ չի դրսևորել հայկական շուկայում, հետևապես «My Family» ապրանքային նշանը չի կարող ճանաչված լինել հայ սպառողի կողմից:

Ինչ վերաբերում է IR 824469 միջազգային գրանցմամբ «My Family» ապրանքային նշանի առկայության պայմաններում փորձաքննության կողմից «МОЯ Семья» (ՀՀ վկ.դ.12096) ապրանքային նշանի գրանցման օրինականությանը, ապա օրենսդրությունը իմպերատիվ ձևով չի սահմանում, որ մեկը մյուսի թարգմանություն հանդիսացող նշանները համարվում են շփոթելու աստիճան նման, հետևապես փորձաքննությունը պետք է մերժի այնպիսի նշանների գրանցումը, որոնք հանդիսանում են արդեն գրանցված (պահպանվող) նշանների թարգմանությունը:

Կարգի 97-րդ կետով սահմանված է, որ ապրանքային նշանների նմանությունը կարող է լինել ձայնային (հնչյունային), գրաֆիկական (տեսողական) և իմաստային (արտահայտված մտքի):

Տվյալ դեպքում ձայնային և գրաֆիկական առումով քննարկվող նշանները ամբողջությամբ տարբերվում են իրարից: Ինչ վերաբերում է իմաստային նմանությանը, ապա բողոքարկման խորհուրդը՝ հաշվի առնելով «My Family» ապրանքային նշանի գրանցման առկայության պայմաններում «МОЯ Семья» ապրանքային նշանի տևական օգտագործման փաստը և առաջնորդվելով Արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան կոնվենցիայի 6^{quinquies} c(1) հոդվածի պահանջներով, ըստ որի նշանի գրանցման հարցում «անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր փաստացի հանգամանքները, հատկապես՝ նշանի տևական օգտագործումը», գտնում է, որ համեմատվող նշանները շփոթելու աստիճան նման չեն, այսինքն՝ «МОЯ Семья» նշանն ունի տարբերակիչ հատկություն և ենթակա է գրանցման:

Հետևապես, բողոքարկման խորհուրդը անհիմն է համարում բողոքարկողի կողմից բողոքում ներկայացված փաստարկն առ այն, որ «МОЯ Семья» (ՀՀ վկ.դ. 12096) ապրանքային նշանը գրանցվել է «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի

12-րդ հոդվածի 1-ին մասի բ) ենթակետով սահմանված պահանջների խախտմամբ, և գտնում է, որ նշանի գրանցումը կատարվել է օրինական հիմքերով:

Ելնելով դրանից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 74-րդ կետի «բ» ենթակետով, բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել Օբձջեստվո ս օգրանիչեննոյ օսվետստվեննոստյու «Սովմեստնոյե պրեդպրիյատիյե ՆԻԴԱՆ-ԷԿՈՖՈՒԿՏ» ընկերության բողոքը և «МОЯ Семья» ապրանքային նշանի դ.12096 գրանցման գործողությունը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
Նախագահ

Ա.Ազիզյան